

**ԿԱՌՈՒՑՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ (ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ -ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,
 ԱՌԱՆՁԻՆ ՀՈՂԱՍԱՍԻ), ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ
 ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՍԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ
 ՏՐԱՍԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

| Վարկերի տրամադրման աշխարհագրական շրջանակը | Հայաստանի Հանրապետություն |
|---|--|
| Վարկառու/Գրավատու | Կառուցվող անշարժ գույքի և բազմաբնակարան բնակելի շենքում կառուցվող բնակարանի համար հիփոթեքային վարկերը տրամադրվում են 21 տարին լրացած ռեզիդենտ ֆիզիկական այն անձանց, ովքեր վարկի գործողության ողջ ընթացքում չեն բոլորի կենսաթոշակային տարիքը: |
| Տրամադրվող գումարի մեծությունը | նվազագույնը՝ 1.500.000 AMD 3.000 USD առավելագույնը՝ 50.000.000 AMD 100.000 USD |
| Տարեկան անվանական տոկոսադրույքը | USD/AMD սկսած 10%-ից մինչև 24% |
| Տարեկան փաստացի տոկոսադրույք | 10.54%-ից մինչև 67.82% |
| Մարման եղանակ | Ըստ հաճախորդի ընտրության՝ անուիտետային վճարումներ, կամ վարկի գումարի հավասարաչափ մարում գումարած վարկի մնացորդի վրա հաշվարկված տոկոսները (գսպանակաձև մարում) |
| Տոկոսագումարի հաշվարկման և վճարման կարգը | Տոկոսագումարի հաշվարկը կատարվում է վարկի նվազող մնացորդի նկատմամբ օրական կտրվածքով և ենթակա է վճարման ամսական պարբերականությամբ |
| Վարկի ժամկետը | 1-ից մինչև 10 տարի |
| Վարկի գումարի և տոկոսագումարի մարումները | Վարկային պայմանագրով նախատեսված ժամանակացույցի համաձայն |
| Վարկի դիմում-հայտի ուսումնասիրության վճար | 7.000 ՀՀ դրամ |
| Վարկի տրամադրման միջնորդավճար | Տրամադրվող գումարի 0-2%-ի չափով |
| Վարկի սպասարկման վճար | Ամսական՝ 0-ից 5000 ՀՀ դրամ |
| Վարկառուի այլ ծախսերը | Վարկի տրամադրման հետ կապված ՀՀ օրենսդրությամբ սահմանված ծախսերը (այդ թվում՝ նոտարական վավերացման, պետական գրանցման, ապահովագրական և այլն) |

| | |
|---|---|
| Աշխատանքային փորձ | 1. 6 ամիս չընդհատված աշխատանքային փորձ վերջին աշխատանքային վայրում 2. Ընդհանուր աշխատանքային ստաժ՝ առնվազն 1 /մեկ/ տարի |
| Վարկային պարտավորությունների կատարման ապահովման միջոցները | Անշարժ գույք, այլ գրավ, երաշխիք, երաշխավորություն, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված այլ եղանակներ |
| Վարկային հայտի ուսումնասիրության ժամկետ | 1 աշխատանքային օր՝ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո |
| Վարկառուին վարկի տրամադրման ժամկետ | Համապատասխան պայմանագիրը նոտարական կարգով կնքելուց և պետական լիազոր մարմիններում համապատասխան ձևակերպումներ իրականացնելուց հետո 1 բանկային օրվա ընթացքում |
| Վարկի տրամադրման եղանակ | Վարկը տրամադրվում է մասնաբաժիններով /փուլերում/ |
| Տոկոսագումարների հաշվարկման կարգը | Տոկոսագումարի հաշվարկը կատարվում է վարկի նվազող մնացորդի նկատմամբ օրական կտրվածքով և ենթակա է վճարման ամսական պարբերականությամբ |
| Ժամկետանց վարկի գումարի գծով հաշվարկվող տույժ | 0.13% չափով տույժ ժամկետանց վարկի մայր գումարի նկատմամբ՝ ամեն ժամկետանց օրվա համար |
| Ժամկետանց տոկոսագումարի գծով հաշվարկվող տույժ | 0.13% չափով տույժ ժամկետանց տոկոսագումարի նկատմամբ՝ ամեն ժամկետանց օրվա համար |
| Վարկային պատմությանը ներկայացվող պահանջներ | 1. Գործող վարկերը չպետք է լինեն դասակարգված որոշումը կայացնելու պահին. 2. Ժամկետանց օրերի քանակը բոլոր վարկերի գծով վերջին 12 ամիսների ընթացքում չպետք է գերազանցի 30 օրացույցային օրը |
| Անշարժ գույքի ապահովագրություն | Չի կատարվում |

Լրացուցիչ տեղեկություն:

Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա: